

ՇՏԱՊՐՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ԲՐԻԳԱԴԻ ՀԱՄԱՐ ԿՐԾՔԱՎԱՆՂԱԿԻ ՑԱՎՈՎ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Գործունեության ընթացակարգի նպատակն է արդյունավետ դարձնել շտապբուժօգնության (ՇԲՕ) անձնակազմի աշխատանքը կրծքավանդակի ցավի ժամանակ: Ընթացակարգը կազմված է ԱՄՆ Հյուսիսային Կարոլինայի ՇԲՕ 2012 թ ուղեցույցների հիման վրա:

Կրծքավանդակում ցավ կարող է առաջանալ ինչպես սիրտ-անոթային, այնպես էլ այլ օրգան համակարգերի ախտահարումների ժամանակ: ՇԲՕ անձնակազմից պահանջվում է առավել զգոնություն կրծքավանդակում ցավ առաջացնող կյանքին վտանգ սպառնացող հիվանդությունները ժամանակին ախտորոշելու և համապատասխան քայլեր ձեռնարկելու համար: Այդ հիվանդություններն են՝ սրտամկանի սուր ինֆարկտ՝ ինչպես STEMI, այնպես էլ NSTEMI, անկայուն ստենոկարդիաներ, ԹԶԹԷ, պնևմոթորաքս, աորտային շերտազատող անևրիզմա, պերիկարդիտ, պլևրիտ:

1. Տեղանքի գնահատում

- 1) Գնահատել տեղանքի անվտանգությունը
- 2) Զննել տեղանքը տվյալ վատթարացման հետ հնարավոր կապ ունեցող իրերի առումով՝ դեղորայք, ներարկիչներ և այլ:

2. Տուժածի վիճակի գնահատումն հիվանդության պատմության հավաքագրում

- 1) Զննել/ուշադրություն դարձնել հետևյալ նշանների վրա՝
 - Ցավի տեսակ (ճնշող, սեղմող)
 - Տեղակայում (կրծքավանդակի, հետկրծոսկրային, էպիգաստրալ, բազկի շրջանի, ստորին ծնոտ, պարանոց, ուսեր)
 - Ցավի բնույթը (ճառագայթող)
 - Ցավի առաջացման սկիզբ և տևողություն

- Գունատ, խոնավ մաշկ
- Դժվարաշնչություն, հեղձուկի զգացում
- Սրտխառնոց, փսխում

2) Հավաքագրել հիվանդության հակիրճ պատմություն


- Տարածհիվանդություններ՝ՍԻՀ, սրտամկանիինֆարկտ, ռիթմի խանգարումներ,ինսուլտ
- Ուղեկցող հիվանդություններ՝զարկերակային գերճնշում, շաքարային դիաբետ,
- Տարիք
- Ընդունած դեղամիջոցներ
- Ալերգիաներ
- Ֆիզիկական ակտիվություն

3) Հավաքագրելով պացիենտի ախտանիշները, հիվանդության պատմությունը, տարբերակիչ ախտորոշում անցկացնել կրծքավանդակի ցավ առաջացնող ներքոգրյալ հիվանդությունների միջև՝

- Կրծքահեղձուկ կամ սրտամկանի ինֆարկտ
- Պերիկարդիտ
- ԹՁԹԷ
- Պնևմոթորաքս
- Աորտայի շերտազատում կամ անևրիզմա
- ԳԷՌՀ կամ ստոծանիական ճողվածք
- Կերակրափողի սպազմ, դիվերտիկուլ
- Կրծքավանդակի վնասվածք
- Պլևրալ ցավ
- Միջկողային նևրալգիա
- Պարբերական հիվանդություն
- Այլ հիվանդություններ

4) Ճշտել երբ է սկսվել վիճակի տվյալ վատթարացումը կամ այն ժամանակը, երբ անձին վերջին անգամ տեսել են նորմալ վիճակում

3. Բուժօգնությունտեղում և տեղափոխման ընթացքում.



4. Կարևոր նշումներ

- 1) Նիտրոգլիցերինի կիրառումը հակացուցված է վերջին 48 ժամվա ընթացքում սիլդենաֆիլ, վարդենաֆիլ կամ տադալաֆիլ ռոգտագործած հիվանդներին:
- 2) Եթե սրտային անբավարարության/կարդիոգեն շոկի պատճառը (II, III, aVF) արտաձումներում հայտնաբերված ինֆարկտն է, ապա նիտրոգլիցերինի կամ օփիոիդների կիրառումը կարող է բերել իհիպոտենզիայի, ինչը ֆիզ. լուծույթի (բոլյուս) ներակման ցուցում է:
- 3) Հետևել ՋԹ-ին Նիտրոհիլցերինի ներկրոտիկներ (մորֆին) ներարկելու դեպքում:

5. Տեղափոխման որոշման ընդունում

- 1) Կրծքավանդակում ցավ ունեցող տուժածին բուժօգնություն ցուցաբերելուց հետո տեղափոխել մոտակա հինվազիվ ստրաբանությանն առանձին մացիոն բաժանմունք ունեցող բազմապրոֆիլ բուժ հաստատություն:
- 2) Իրազեկել պացիենտին և/կամ վերջինիս հարազատներին դեպքի հրատապության, սպասվող ռիսկերի և առաջարկվող գորողությունների պլանի վերաբերյալ և ստանալ իրազեկման գրավոր համաձայնություն:
- 3) Թիրախային բաժանմունքի/բուժհաստատության իրազեկում տվյալ պացիենտի վերաբերյալ ներառյալ՝ ԱԱՀ, տարիք, նախնական ախտորոշում, ենթադրյալ ժամանման ժամանակ:

6. Փաստաթղթավարություն

- 1) Կատարել պատշաճ գրանցումներ պացիենտի վիճակի և բուժօգնության վերաբերյալ:
- 2) Զեկուցել Կենտրոնական կայանի դեպքի սպասարկման արդյունքների վերաբերյալ:

3) Բարդ, իրարամերժ կամ կոնֆլիկտային իրավիճակների դեպքում զեկուցել անմիջական ղեկավարին:

7. Հապավումներ

ՇԲՕ – Շտապբուժօգնություն

ԱՄՆ – Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ՍԱՏ – ստամոքսաղիքային տրակտ

ՍԻՀ – սրտի իշեմիկ հիվանդություն

ՍԻ – սրտամկանի ինֆարկտ

ԹԶԹԷ – թոքային զարկերակի թրոմբոզմբոլիա

ԳԷՌՀ – գաստրոէզոֆագիալ ռեֆլյուքսային հիվանդություն

ԷՍԳ – էլեկտրասրտագրություն

ԶՃ – զարկերակային ճնշում

ԶԹ – զարկերակային թերճնշում

ՍԶՃ – սիստոլիկ զարկերակային ճնշում

ԱԱՀ – Անուն Ազգանուն Հայրանուն

STEMI – ST-segment elevation myocardial infarction (“ST” սեգմենտի էլեվացիայով սրտամկանի ինֆարկտ)

NSTEMI – non-ST segment elevation myocardial infarction (առանց “ST” սեգմենտի էլեվացիայի սրտամկանի ինֆարկտ)

8. Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ

Փաստաթղթի կազմման համար աշխատանքային խմբի անդամները ֆինանսական աջակցություն չեն ունեցել:

Թիմի անդամները միմյանց կամ որևէ կազմակերպության հանդեպ չափերի բախում չունեն:

9. Գրականության ցանկ՝

- 1) Advanced Cardiovascular Life Support. American Heart Association. Provider manual. 2016. Available at: <https://ebooks.heart.org/product/acls-provider-manual-ebook-collection>
- 2) HIGHLIGHTS of the 2015 American Heart Association Guidelines Update for CPR and ECC. Available at: <http://www.cercp.org/images/stories/recursos/Guias%202015/Guidelines-RCP-AHA-2015-Full.pdf>
- 3) European resuscitation council Guidelines 2015. Available at: <https://cprguidelines.eu/>
- 4) M.F.Hazinski, BLS for healthcare providers. American Heart Association 2011
- 5) North Carolina Chapter of Emergency Physicians Protocol Committee, North Carolina Office of EMS (2012)